ՎԻՄԱԳՐԵՐ ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻՑ

ՍՈՒՐԵՆ ՍԱՂՈՒՄՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հին Ջուղայի հուշագրական կոթողների (խաչքարեր, իոյատապաններ) քանդակագործությունը հայ արվեստի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում։ Դրա վկայությունն են լայն տարածում ստացած Ջուղայի դպրոց, ջուղայական արվեստ արտահայտությունները։ Ջուղան մեր պատմության հորիզոնում բարձրանում էր թեև ոչ միայնակ, իբրև բացառիկ երևույթ, սակայն քաղաքն ապրում էր ներքին ինքնավար-ինքնամփոփ կյանքով։

Ջուղայահայերի կապերն ավելի սերտ էին արտաքին աշխարհի հետ։ Այս պատճառով էլ, եթե Շիրակ-գուգարքյան, Սյունիք-արցախյան ճարտարապետության ու արվեստի մեջ կան սերտ ընդհանրություններ, ապա Ջուղայի արվեստում պահպանվել են բուն Հայաստանի ավանդույթների ու նվաճումների արտացոլքերը միայն։ Ցավոք, Ջուղա քաղաքի պատմությունը ցայժմ քիչ է ուսումնասիրված. այս հարցին, իրեն հատուկ բծախնդրությամբ, անդրադարձել է Ղ. Ալիշանը[1], օգտվելով 1605 թ. անողորմ գաղթը սրտամորմոք նկարագրող Առաքել Դավրիժեցու Պատմությունից[2]։ Քաղաքի պատմության ու հուշարձանների առանձին հարցեր շարահարել են նաև Ս. Սեդրակյանը[3], Լեոն[4], Ա. Այվազյանը[5]։

Ջուղայի պատմությանն առավել համակողմանի անդրադարձել է Ս. Տեր-Ավետիսյանը։ Սակայն նրա հեղինակությամբ դեռևս 1937 թ. հրատարակված միակ համահավաք աշխատությունն[6] անգամ այսօր չի կարող բավարարել Արաքսի ափին 150 տարի աննախադեպ վերելքով ապրած քաղաքի տնտեսական, հոգևոր, արհեստագործական, մշակութային և դրամաառևտրական կյանքից ճշմարիտ ու հիմնավոր տեղեկություններ ակնկալողի պահանջը։ Ջուղայահայերի և Ջուղա քաղաքի տնտեսական, արհեստագործական, մշակութային կյանքի, արտաքին կապերի մասին միայն առանձին, հատուկտոր դրվագներ են պահպանվում մատենագիրների երկերում, ձեռագիր հիշատակարաններում, ճանապարհորդների նոթերում ու դիվաններում, մինչդեռ քաղաքի ստույգ պատմության, նրա արվեստագիտական ու ճարտարապետական կյանքի մասին բավականաչափ նյութեր կան բուն բնակավայրի տարածքում, որոնք 1605 թ. արտագաղթից, հրավառությունից, ավերածությունից հետո էլ (XVIII—XX դդ.) ոչնչացվել են անխնա, իսկ մնացած պատառիկները կարող են անհետ կորչել՝ շարժանացած հետազոտողների ուշադրությանը։ Մեզ առանձնապես հետաքրքրում է Ջուղայի պատմական գերեզմանոցը (նկ. 1), որտեղ

---

1 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 409—428։

2 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 57—70 և այլն։

3 «Հնութիւնք հայրենեաց ի գավառին Երնջակոյ», աշխատություն Արիստակես վարդապետի Սեդրակյան, Վաղարշապատ, 1872։

4 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1969։

5 А. Айвазян, Памятники армянской архитектуры Нахичеванской АССР, Ереван, 1981.

6 С. В. Тер-Аветисян, Город Джуга, Тбилиси, 1937.

Ալ. Ռոդեսի վկայությամբ, XVII դ. եղել է 10 հազար խաչքար[7], հորինված այն ժամանակներում, երբ քաղաքը «...էր մեծ և երևելի շէնն այն ի ժամանակին յայնմիկ ի մէջ արեւելեայ աշխարհիս»[8]։ Իսկ Պարսկաստանում Անգլիայի դեսպանի եղբայրը՝ սըր Ուիլիամ Աուզլեյը 1812 թ. Թավրիզից Պոլիս մեկնելիս, անցնելով Ջուղայի ավերակներով, նկարագրել է այնտեղ ապրող 45 հայ ընտանիքի թշվառ վիճակը և նշել, որ քաղաքի «...նախկին բնակիչների բազմության մասին լիովին վկայում է ընդարձակ ու խառնված գերեզմանատունը, դետեղված դեպի գետ իջնող մի զառիվայրի վրա և ծածկված ուղիղ կանգնած բազմաթիվ դերեզմանաքարերի շարքով, որ երբ դիտվում է մի քիչ հեռվից, նման է զինվորների վաշտերի, շարված խիտ կարգով։ ...Այս շատ սերունդների հիշատակարաններն են, հանրագումարը բազմաթիվ դարերի»[9]։ Սըր Աուզլեյի հայրենակից ու ժամանակակից նկարիչ, հնագետ Ռոբերտ կեր Փորտրն իր ուղեգրություններում առանձնակի սրտացավությամբ է խոսում երեք բլուրների վրա տեղավորված գերեզմանոցի «երկար ուղղահայաց քարերի» մասին, որոնցից հազիվ թե գտնվի «...մեկը, որը խնամքով քանդակված չլինի զանազան պատկերներով»[10]։ Հումանիստ արվեստագետին հետաքրքրել են ոչ միայն «ամելամաղձոտ վայրի ...քաղաքի ավերակները, որոնց հիմնադիրները մեռել են մարդկության մանկության օրերին»[11], այլ նաև խաչքարերն ու խոյատապանները։ Նա նշում է, որ խոյատապանները ոչ թե սև և սպիտակ ոչխարավորների, այլ հայերի ստեղծագործությունն է, որոնցից «Ոմանք ունեն պարզ ձև, ուրիշները նրբորեն քանդակված՝ տարօրինակ պատկերներով ու զարդաքանդակներով»[12]։ Օտարերկրացի հեղինակը նույնիսկ նկարել է մի խոյատապան՝ քանդակների ճշմարիտ վերարտադրությամբ, փորձել մեկնաբանել դրանք և տապանագիրը գրչանկարել է բնօրինակին այնպիսի հարազատությամբ, որ հնարավոր է ընթերցել. Այս է հանգիստ Ստեփանոս (?) աղաին (?). Թ.ՌԻԷ (1578)[13], Ի դեպ, այս արձանագրությունը չկա ո՛չ Ալիշանի, ո՛չ Ս. Տեր-Ավետիսյանի գրքերում, ինչպես և մեր հավաքածուում։

Ջուղայի պատմական գերեզմանոցները տեղադրված են քաղաքի տարածքում, Արաքս գետի ձախ ափին՝ մեկը երկաթգծի լեռնանցքում, ժայռեղեն հրվանդանի վրայի բազիլիկ եկեղեցու հարևանությամբ, մյուսը՝ 300 մ արևմուտք, գմբեթավոր եկեղեցու մոտ, իսկ ամենաընդարձակն ու հիմնականը՝ մի փոքր ավելի արևմուտք՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող երեք բլուրների և ձորակների վրա։ Գլխավոր գերեզմանոցի գետամերձ շուրթը (հնագույն մասը) կտրվել է 1904 թ. երկաթգծի անցկացման հետևանքով։ Այդ ընթացքում էլ ոչնչացել են բազմաթիվ խաչքարեր, իսկ մի մասը դարձվել շպալներ, գետի եզրակողի պատնեշաքարեր, կամրջակների և զինվորական ստորգետնյա պահակակետերի շինաքար։

Ինչպես վերը նշվեց, Ալ. Ռոդեսի ժամանակ (1648 թ.) Ջուղայում եղել է 10 հազար խաչքար, Ս. Տեր-Ավետիսյանի մոտավոր հաշվումներով 1904 թ. մնացել էր 5 հազար[14], իսկ 1976 թ. մեր այցելության ժամանակ՝ մոտ 3 հազար[15]։ Ուրեմն, 256 տարվա ընթացքում (1648—1904) 10 հազար խաչքարերից ոչնչացել է 5 հազարը, այսինքն՝ 50 տոկոսը, իսկ վերջին 72 տարում՝ 5 հազարից 2 հազարը, այսինքն՝ 40 տոկոսը։ Ինչ խոսք, տագնապալի է արվեստի եզակի բնօրինակների ոչնչացման նման սպառնալի արագությունը։ Հանրա-

7 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 424, С. Тер-Аветисян, նշվ. աշխ., էջ 122։

8 Առաքել Դավրիժեցի, էջ 12։

9 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ (1800—1820), հ. Զ, Երևան, 1934, էջ 443։

10 Նույն տեղում, էջ 797։

11 Նույն տեղում, էջ 798—799։

12 Նույն տեղում, էջ 797։

13 Նույն տեղում։

14 С. Тер-Аветисян, նշվ. աշխ., էջ 119, 122։

15 Խաչքարերը մեկ առ մեկ հաշվել ենք Ա. Մ. Ենգոյանի հետ։



Նկ. 1

Հայտ է, որ հուշադրական կոթողների նման մեծ քանակություն, անգամ անողորմ խստասրտությամբ կատարված ջարդարարությունից հետո, չկա ու չի էլ եղել պատմական Հայաստանի ոչ մի բնակավայրում։ Մեր օրագրերում Ջուղայից կան ավելի քան 100 վիմագիր արձանագրություններ, որոնց մի մասը Ս. Տեր-Ավետիսյանի հրատարակածների կրկնությունն է, ուստի հարկ չկա դրանք երկրորդել։ Լրացնելով Ղ. Ալիշանին և Ս. Տեր-Ավետիսյանին, ստորև կներկայացնենք միայն անտիպ վիմագրերը[16], մեզ հայտնի քարգործ վարպետների ստեղծագործությունները և կանդրադառնանք այն մասնավոր ու ընդհանուր հատկանիշներին, որոնք բնորոշ են Ջուղայի քանդակագործական դպրոցին։ Հնարավոր շփոթից խուսափելու նպատակով արձանագրությունները ներկայացնում ենք տարածքային սկզբունքով, զանց առնելով ժամանակագրական հաջորդականությունը, սկսելով երկաթգծի լեռնանցքին հարակից գերեզմանոցից, որի արևելյան եզրի որմնափակ խաչքարը (միակը Ջուղայում), ինչ որ չափով ուղենիշի դեր է կատարելու։ Նշենք նաև, որ ժամանակագրական հարցը Ջուղայում էական դեր չի խաղում։ Առանձին-առանձին, իրարից զատված, հատուկ գերեզմանոցներ չեն եղել, ինչպես Նորատուսում, ուստի և հաջորդաբար կանգնեցված խաչքարերն ու խոյատապանները ժամանակագրական առումով բավական մոտ են միմյանց։

Խաչքար, որմնախաչից 4 մ արևելք, արձանագրությունը՝ խաչաթևերի արանքում (գծ. 1). ՍՄՈՒՐՈՒ Խ/ԼԱՅՁՍ ՅԼԻՅՇԼԱՅՏ/ԱԿ Է/ ՍԱՐԳԻ/ՍԼԻՅՍ։ Սպասելի էր Սարգիսին տառադարձումը, բայց վերջին տողում պարզ գրված է երկու Ս, որով պատվիրատուն խուսափելով անորոշությունից, ս դիմորոշ հոդով սուտի ջերմությունն է հաղորդել որդու հիշատակին։

---

16 Նկատի չենք առնում Ա. Սեդրակյանի նշված աշխատության մեջ ազատ ընթերցմամբ հրատարակված 12 արձանագրությունները, որոնք նույնությամբ մտել են Կ. Կոստանյանի կազմած «Վիմական տարեգրի» մեջ (Պետերբուրգ, 1913)։

Խաչքար, նույն տեղում, խորանում և շրջաքանդակի տակ (գծ. 2). Թվ. Ռ/ԽԸ (1599). /ՍՐՈՒՐՅԲ ԽԱՉՍ ՅԻՇԵՐԱՏԱԼԿ/ ԼԷՅ ՂԱՐՏԱՇԻՆ, ՋԱՒ/ԱԹԻՆ, ԽԱԲՈՒՆ/ԻՆ ՀՈԳՈՒՆ։ Արձանագրությունը, որն ակնառու տարընթերցումներով հրատարակել է Ալիշանը[17]*, բառանջատված է երկու կետերով։ Նման երևույթ դիտվում է ոչ միայն Ջուղայում, այլև հայոց ուշ շրջանի վիմագրերում։ Հոգևոր զոյականի առկայությամբ անձնանունների Ն-ով ավարտը տարածված է Ջուղայում, որը, թերևս, հատուկ է տեղական բարբառին։*

Խաչքար, նախորդների մոտ, արձանագրությունն սկսվում է ձախ եռաբկոդի ստորին մասից և շարունակվում աջակողմի վերևում՝ ձախից աջ սկզբունքով (գծ. 3). ՍԼՈՒՐՅԲ ԽԱԼՉՍ ՅԻՇԱՏԱԿ Է Ա/ՂԱՋԱՐԻՆ. Թվ. ՌԽԵ (1596)։ Հնարավոր չէ պարզել՝ արդյոք Աղաղարը որևէ կապ ունի՞ 1604 թ. Պոմպոլոզի ժամի մոտ թաղված Առաքելի հայր Աղաղարի[18] *հետ, թե՞ ոչ։*

Խաչքար, նախորդների մոտ, պարզ հորինվածքով, արձանագրությունն սկսվում է ներքևի մասից և ավարտվում վերևում (գծ. 4). Թվ./ Ռ/Խ (1591)./ ԽԼԱՅՉՍ ԼՅԻՇԼԱՅՏԼԱՅԿ ԼԷՅ /ՍԱԲԱ/ՀՈՒՆ։ Անձնանունը գուցե սարում է սասրական սաբա=մեծ, ծեր բառից։

Խաչքար, որմնափակ խաչքարի առաջ կոթողաձև քարի վրա գավաղանանման խաչ է քանդակված, որի ստորին գծաթևի երկու կողմում փորագրված է (գծ. 5). ԽԼԱՅՉՍ ՅԼԻՇԼԱՅՏԼԱՅ/Կ Է ՆԱ/ՉԷ ՀԼՈՅԳԼՈՅՆ. /Թվ. Ռ/ԾԱ (1602)։

Խաչքար, նույնանման, առաջինի մոտ, ստորին մասում արձանագրված է (գծ. 6). ԽԼԱՅՉՍ ՅԼԻՇԼԱՅՏԼԱՅԿ Է/ ՅԼՈՅՎԼԱՅՆԻՍԻՆ /ՀՈՐԳՈՅՆ։ Վերջին տառերը ծածկված են հողով։ Թեև թվագրված չէ, բայց առաջինի ժամանակակիցն է։

Խաչքար, վերոհիշյալներին մերձ, խաչահանգույցում թիվն է, ստորին հատվածում՝ հիշատակագիրը (գծ. 7). Թվ. Ռ/ԽԷ (1598). /ԽԱՉՍ ՅԻՇ/ԱՏԱԿ Է Մ/ՐՎԱԹԻՆ։

Խաչքար, փոքր, նույն մասում, առաջինների պես պարզ մշակված (գծ. 8). Թ. Ռ (1551). /ԼԽԱՅՉՍ ԼՅԻՇԼԱՅՏԼԱՅԿ։ Ննջեցյալի անունը չի փորագրված։

Խաչքար (սա և հաջորդ երկուսը առաջիններից հեռու չեն). արձանագրությունը՝ խաչաքանդակի երկու կողմերում (գծ. 9). Թվ. Ռ/ԽԸ (1599). /ԽԱ/ՉՍ ՅԻՇԱՏ/ԱԿ Է ԲԷԿ/ԻՋԱՆ/ԻՆ։

Խաչքար, խաչանշանի երկու կողմում (գծ. 10). ԽԼԱՅՉՍ ՅԼԻՇԼԱՅՏ-/ԱԿ Է/ ՀԷՔԱ/ԼԻՆ. /Թվ. ՌԽԵ (1596)։

Խաչքար, նախորդի կողքին, փոքր, պարզունակ, խաչի ճակատին (գծ. 11). Թվ. Ռ/ԽԸ (1599) ԽԱՉՍ /ՅԻՇԱ/ՏԱԿ/ Է /ՔԱՐ/ԵԱՆ/ Է Հ/ՈԳԼՈՅՆ[19]*։*

Խաչքար, նույն հատվածում, խաչաքանդակի տակ (գծ. 12). Թվ. ՌԽԹ (1600). /ՍՐՈՒՐՅԲ ԽԱՉԼՍ ՅԻՇԼԱՅՏԼԱՅԿ Է /ՉԱՀԱՆԳԻՐ/ԻՆ ԵՒ ԿՐՈՂՄԱ-ԿՑԼԻՆ՝ /ԱԶԻՋԻՆ։ Ի դեպ, Ջուղայի գրիչներն անփութության չափ ազատ են կրճատումների հարցում և սակավադեպ են օգտագործում սղման նշանը, թեև հապավումները բացվում են դյուրությամբ, քանի որ դրանք տրաֆարետային կրկնությամբ տապանագրեր են, իսկ անձնանուններն էլ՝ քաջածանոթ։ Հայոց այլ շրջանների նման այստեղ ևս հիմնականում ձայնավորները սղվում են։ Սղման մարմաջով տարված, արձանագրողները երբեմն կրճատել են բառասկզբի մի քանի տառերը (տե՛ս 4, 12, 19, 32, 41, 68 արձանագրությունները), անգամ՝ բաղաձայնները (արձ. 8, 12, 15, 68)։ Սակայն պատահում է նաև, որ գրված են բոլոր ձայնավոր տառերը (արձ. 7)։ Նման անվերապահ վերաբերմունքն արձանագրությունների ընդօրինակության ընթացքում զգուշության լրացուցիչ ազդ է։

---

17 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 423։

18 С. Тер-Аветисян, նշվ. աշխ., էջ 173։

19 *Երբ արձանագրություններում սղված է հոգևոր բառը, գերադասում ենք այն վերականգնել ուղիղ ձևով, քանի որ այդպիսիք հանդիպում են տեղում։*

Խաչքար, նույն հատվածում (գծ. 13). Թվ. Ռ/ԽԶ (1597). /ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԱՅԿ ԼԷՅ /ՄԱՐԿՈՍԻՆ/ ՀՐՈՅԳՐՈՑՆ։

Խաչքար, նույն գերեզմանոցում (գծ. 14). Թվ. Ռ/ԽԴ (1595). /ԽԼԱՉՅՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԱՅԿ Է ՄԻՐՉ/ԻՆ ՀՐՈՅԳՐՈՑՆ։

Խաչքար, խորանում (գծ. 15). ՍԼՈՒՐՅԲ /ԽԼԱՅՉՍ /ԲԼԱՐԵՅԽԼԱԻՅՍ Է /ԱՌ ՔԼՐԻՍՏՈՅՍ /ԹԷԲ/ԻՆ. Թվ. /ՌԽ/Ե (1596)։ Նկատելի է, որ Հայաստանում տարածված սուրբ խաչս բարեխաւս է ձեակերպման փոխարեն Ջուղայում գերակշռում է խաչս յիշատակ է արտահայտչաձևը և սակավ են դիմում սուրբ ածականին։

Խաչքար, ստորին մասում՝ (գծ. 16). ԽԼԱՅՉՍ /ՅԼԻՅՇԼԱՅՏ/ԱԿ /Է/ ՂԱ/ՐԱ/ՄԱՆ/ԻՆ. /Թվ.Ռ/ԽԹ (1600)։

Խաչքար (գծ. 17). ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՏԱՅԿ ԼԷՅ ՕՂ/ԼԱՆԻՆ, ՐԹԼԷՎԱ/Տ ՄԵԼԻՔԻՆ։ Ստուգելու հնարավորություն չունենալով, էվատը ընթերցում ենք Թևատ (թևը հատած, կտրած)։

Խաչքար, առաջինի մոտ (գծ. 18). ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԱՅԿ/ԼԷՅ, ՇԱ-ՏՈՒ/ՐԻՆ. Թվ/ՌԼԲ (1583)։

Խաչքար, խորանում և ստորին մասում (գծ. 19). Թվ.Ռ/ՇԷ (1608). /ԽԱՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԱՅԿ Է ԲԱ/ԲԷՐԹԷՑԻ Ղ/ԱՐԻԲԻՆ ՈՐ ԼՔՈՅԽԵՑ/ԱԻ ԱՉԳԱՑ։ Այս գերեզմանոցից ներկայացվող 43 արձանագրությունից 35-ը թվագրված են. հնագույնը՝ 1501, իսկ վերջինը՝ 1608 թվականով։ Հետաքրքրական է հատկապես վերջինը։ Այն վկայում է, որ քաղաքի հիմնահատակ կործանումից հետո լեռներում պատսպարված կամ գաղթի ճանապարհից փախած ջուղայեցիները վերադարձել են հայրենի օջախ։

Խաչքար, նախորդից ոչ հեռու, խաչաթևերի միջև (գծ. 20). ՍԼՈՒՐՅԲ /ԽԱՉՍ/ ՅԼԻՅՇԼԱՅՏԱՅԿ ԼԷՅ /ԱՄԻՐ/ ԻՆ. Թվ. Ռ./ՇԳ (1604)։ Ջուղան, հայկական միակ բնակավայրն է, ուր արձանագրություններում գործածվել է միաստեղն Ա։ Այս փաստը նկատել է Ս. Տեր-Ավետիսյանը[20]։ Ու թեև դա հաստատուն կարդ չի եղել և կան իրապատկեր Ա-եր, սակայն նկատելի է, որ հապավվում են երկու եղրից բաղաձայնով փակվող եռաստեղն Ա-երը, ուր ակնհայտ է տեղ ու ժամանակ խնայելու միտումը։ Փորագրողները չեն խորշել անդամ անձնանունները սկսել միաստեղն Ա-ով (ինչպես այս դեպքում)։ Է՛լ ավելի աննախադեպ ու չկրկնվող է խաչքարի թվատառի Ա-ի (մեկ) նման գրության փորձը (արձ. 38)։

Խաչքար (գծ. 21). Թվ. Ռ/ՇԱ (1602). /ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅ/ՏԱՅԿ ԼԷՅ ԱՉԻ/ՉԲԷՔԻՆ։

Խաչքար, նույն գերեզմանոցում, ձախ և աջ կողերին (գծ. 22). ՍՐՈՒՐՈՅԲ ԽԱՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԱՅԿ Է ՄԱՀԴԱՍԻ /ԽԻԱԼԻՆ. Թվ. ՌԽԹ (1600)։

Խաչքար, նախորդի մոտ, խաչաքանդակի թևատակերին և ստորին քառանկյան մեջ (գծ. 23). ՍՐՈՒՐՈՅԲ ԽԼԱՅՉՍ /ԲԼԱՐԵՅԽԼԱԻՅՍ Է/ ԱՌ ՔՐԻՍՏՈՅՍ/ ՏԻՐԱ/ՏՈՒՐ/ԻՆ/, ՄԻՐՉԻՆ, ՄԱՐԳԱՐԻՏՏԻՆ։

Խաչքար, խորանի մեջ (գծ. 24). Թվ. Ռ/ԽԷ /1598/. ՍՐՈՒՐՈՅԲ ԽԼԱՅՉՍ/ ՅԼԻՅՇԼԱՅՏԱՅԿ ԼԷՅ/ՄԱՐԻ/ԱՄԻՆ։

Խաչքար, թեքված, խաչաթևերի տակ (գծ. 25). ՍՐՈՒՐՈՅԲ ԽԱՉՍ/ ԲԼԱՐԵՅԽԼԱԻՅՍ ԱՌ/ ՔՐԻՍՏՈՅՍ ԱՄՍՏՈՒԱՇՈ/ԱՏՈՒՐ/ԻՆ. Թվ. /Ռ/ԽԹ (1600)։

Խաչքար, Աստվածատուրի գերեզմանոցից 2 մ հյուսիս, խաչաթևերի տակ (գծ. 26). ՍՐՈՒՐՈՅԲ ԽԼԱՅՉՍ /ԲԱՇՐԵՅԽԼԱԻՅՍ /ԱՌ ՔՐԻՍՏՈՅՍ /ՄԷԼԻ-ՔԼԻՆ./ Թվ. ՌԽԸ (1599)։

Խաչքար, երկատված, ընկած է առաջինի կողքին։ Հարթ մակերեսին հասարակ խաչաքանդակն է, կողերին և քիվին՝ սպիրալաձև պարզ քանդակներ (գծ. 27). Թվ. Ռ/ԽԷ (1598). /ՍՐՈՒՐՈՅԲ ԽԱՉՍ ԲԼԱՐԵՅԽԼԱԻՅՍ /Է ԱՌ ՔԼՐԻՍՏՈՅՍ ՄԽ/ԻԹԱՐԻՆ։

---

20 Նույն տեղում, էջ 127։

Խաչքար, փոքր, նույն մասում, խորանում և խաչաքանդակի տակ (գծ. 28). Թվ. Ռ/ԾԳ (1604). /ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ Է/ ՍԷՎԻՆՋԻՆ։

Խաչքար, կիսաթաղ, առաջինի մոտ, խորանում (գծ. 29). ՍԼՈՒՐՅԲ ԽԼԱՅՉՍ/ ԲԼԱՅՐԼԵՅԼԱԻՅՍ ԱՌ/ ՔԼՐԻՍՏՈՅՍ ՓԻՐԻՋ/ԱՆԻՆ։

Խաչքար, կիսաթաղ, առաջինի կողքին, խաչաթևերի տակ (գծ. 30). ԽԱՉՍ/ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ/ Է ՄԿՐ/ՏՃԻԼՆՅ/, ԻՄՐԹ/ԻՆ/. Թ.Ռ. (1551)։

Խաչքար, կոտրված, խորանում պարանահյուս երկու խաչաքանդակներ, առաջինի մոտ, քիվի տակ (գծ. 31) Թվ. ՌԽԸ (1599)։

Խաչքար, տեղահանված, ստորին մասում շրջօղակներով գունդ, կողերին՝ պարզ գալարափաթույթներ, որոնք կրկնված են եռանկյունիներով հատվող քիվին։ Փորագիր արձանագրությունն է (գծ. 81). ՍԼՈՒՐՅԲ ԽԱՉՍ ՅԼԻՅՇԼԱՅ-ՏԼԱԿՅ Է ՄԱՐ/ԱՆԷ ՀՈՔՈՒՆ. /Թվ. Ռ/ԾԳ (1605)։

Խաչքար, կիսաթաղ, առաջինի մոտ (գծ. 32). ԽԼԱՅՉՍ/ ԼՅԻՅՇԼԱՅ/ՏԼԱՅԿ Է ՆԵՐՍ/ԷՍԼԻՅՆ, ՇԻՐ/ԻՆԼԻՅՆ/. Թվ. ՌԽ (1591)։

Խաչքար, նույն գերեզմանոցի եկեղեցու մուտքի մոտ (գծ. 33). ԱԼՍ-ՏՈՒԱՅԾ ՈՂՈՐՄԻ/ ՐՔՅԱՄԱԼԻՆ։

Խաչքար, փոքր, ագուցված գլխավոր աբսիդին կից աջ խորանի կամարի գլխին (գծ. 34). ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ ԼԷՅ/ ՍԱՀԱԿԻՆ. Թվ.... չի ընթերցվում։

Խաչքար, ագուցված եկեղեցու բեմաճակատին, ձախից (գծ. 35). ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ Է ՄԻ/ՆԱՍԻՆ, ԽԵՐ/ՈՒՄԻՆ, ԱԴ/ԱՄԽՈՒԹ... վերջին երկու տողերն անընթեռնելի են։

Խաչքար, գերեզմանոցի հյուսիս-արևմտյան մասում, խորանում և խաչաքանդակի տակ (գծ. 36). Թվ.Ռ/ԾԱ (1602)./ ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ Է/ ՆԱՆԱՅՋԱՆԻՆ։ Այս հիշատակագրության թվատառի Ա-ն համարել ենք Նանաջան (Նանա) անվան փակագրությունը, քանի որ տառաստեղները վերևից ունեն եղջյուրաձև ելուններ[21] և բոլորովին նման չեն մնացած Ա-երին։

Խաչքար, անմշակ, վերջինից ոչ հեռու (գծ. 37). ԱՐՍՏՈՒԱԾ ՈՂՈՐ-ՄՅԱՅԻ /ԱԼԱՆԴԱՐԻԼՆՅ. /Թվ. Ջ/ԾԲ (1503)։

Խաչքար, ընկած (գծ. 38). ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅ/Կ Է ՄԵՐԻԿ/ԻՆ. Թ. ՌԾԱ (1602)։ Մայր բառարմատից սերող անձնանունները վիմագրերում և հիշատակարաններում տարածված են։ Հայոց սովորությամբ, հատկապես տղայի զավակներին կոչում են ծնողների, պապերի անունով և պատկառանքի նկատառումով երեխաներին կանչում են ոչ թե ծնողի անվամբ (առանձնապես նրանց կենդանության օրոք), այլ ուղղակի պապիկ, ապի, տատս, նանս, նանիկ փաղաքշական անվանումներով։ Եթե մեծ մոր՝ նանի անունը եղել է Հռիփսիմե, ապա թոռնուհուն անվանելով Հռիփսիկ, նրան կոչում են նանիկ, նանար, նանս, որը և հոմանիշն է Արամազդի դստեր՝ աստվածուհի Նանեի։ Մերիկ-ը տվյալ դեպքում նման փոխանցումներից է և դարձել է հատուկ անուն։

Խաչքար (գծ. 39). ԽԼԱՅՉՍ/ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ Է ՇԱԴ/ԻԲԷՔԻՆՅ, ԱԴԻԼ/ԲԷՔԻՆՅ. Թվ. ՋԾ (1501)։ Հիշատակագրության միջնամասը ստույգ չի հասկացվում. երկու առանձին անուն է, թե՞ կրկնանուն՝ Շադիբէք-Ադիբէք։ Սա մեր հավաքածուի հնագույն թվագրությամբ արձանագրությունն է։

Խաչքար, ընկած (գծ. 40). Թվ. Ռ/ԾԳ (1604)։

Խաչքար (գծ. 41). Թվ. ՌՈԾ (1601). ԽԼԱՅՉՍ ԼՅԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ Է/ ՄՀԴՍԻ/ ՆԱՖԱՍ/ԻՆ։

Խաչքար, ընկած (գծ. 42). ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՏԼԱՅԿ ԼԷ/ ԽՈՌ/ԱՄՍԻ-ՄԷԼԻՆ.Թվ. /ՌԲ (1553)։

Խաչքար, կանգուն (գծ. 43). Թվ. ՌԽԸ (1599)./ ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱ/-ՏԼԱՅԿ Է /ԱԶԻԶԲԷՔ/ԻՆ։ Ջուղայի վիմագրերում (թերևս նաև խոսվածքում) խուլ բաղաձայն կ-ն հաճախ է փոխարինվում ֆ-ով (ԱԶԻԶԲԵՔ, ԱԴԻԼԲԵՔ)։

---

21 *Տե՛ս մեր «Փակագրությունը հայ վիմագրության մեջ» հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1980, № 3, էջ 81)։*

Արձանագրություններ ունեցող երկրորդ հուշարձանը դրսից ուղղանկյուն, ներսից խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցում մերձակա փոքրիկ գերեզմանոցն է։ Այս եկեղեցին Ս. Տեր-Ավետիսյանի գրքում անվանված է Պոմպոլոզիկ ժամ[22]։ Չենք կարծում, թե դա հունարեն պոմպիլիս (առաջնորդ) բառի աղավաղված ձևն է, որը երբեմն օգտագործվել է մեզանում։ Թերևս ճիշտ կլիներ բառս ստուգաբանել պոպոզ (սրածայր) իմաստով, պոմպոլոզիկը վերագրելով եկեղեցու թմբուկին (մասնավորապես վեղարին)։ Հուշարձան գերեզմանոցը ավերված է, դամբանախցերը՝ փորփրված, իսկ արձանագրությունները՝ կոտրված ու ջարդոտված։ Այն մասամբ ավերված է եղել դեռևս դարասկզբում, Ս. Տեր-Ավետիսյանի այցելության ժամանակներում։ Այս տարածքից հրատարակում ենք ընդամենը երեք անտիպ արձանագրություն և վերահրատարակում երկուսը՝ տալով գրչագրերն ու անելով որոշ շտկումներ։

*Խաչքար, դեղնավուն քարից (գծ. 44). ԽլԱյՉՍ ՑլԻյՇլԱՏԱյԿ լէյ ՍԱ/ԻԼԹ/ԱՆԻՆ. /ԹՎ. Ռ/Դ (155)։ Շարահյուսական առումով մենք հակված ենք նախապատվությունը տալ է օժանդակ բայի վերականգնմանը (*յիշատակ է, բարեխաւս է*), թեև չլինելու դեպքում էլ իմաստը չի աղավաղվում։ Ս. Տեր-Ավետիսյանը հրատարակել է նույն բովանդակությամբ մի այլ արձանագրություն[23], բայց այն այլ տեղ է և ժամանակով տարբեր (1534 թ.)։*

Խաչքար, ընկած (գծ. 45). ԽլԱյՉՍ ՑլԻյՇլԱՏԱյԿ լէյ Փ/ԻՐԻՋԱՆԻՆ/ ԹՎ. ՋՂԹ (1550)։

Խաչքար, ընկած (գծ. 46). ԹՎ. ՌԽ/Է (1598). /ԽլԱյՉՍ ՑլԻյՇլԱյՏլԱյԿ լէյ /ԳՈՒԼՓԱՇԷլԻյ /ՀՈԳՈՒՆ։ Արձանագրությունը մեր դաշտային օրագրում գետեղել ենք «ազատ» ընդօրինակությամբ, տողատումը երկմտելի է։

Տապանաքար, խոշոր, սպիտակ մարմարից տեղաշարժված, գցված կողքի, դամբարանը փորփրված, տապանաքարի ճակատի գիրը ...ճի առին Աստուածոյ եւ կատարեցաւ սայ ի թվին ճայոց ՌԼԷ ճա[նդիպողf] աս[ացէf ո-ղորմի] (1588), *շարունակությունը հնարավոր չէ կարդալ։*

Արձանագրության մեծ մասը իսպառ ոչնչացվել է. ...ի ձեռն անօրինաց *հատվածի[24] տառերն այժմ ծեծված, կոտրված են։ Մեզ մնում է տալ մատչելի երեսի պահպանված տառաշարքի գծագիրն ու վերծանությունը և ավելացնել, որ այստեղ հանգչում է անօրեններից կողմից սպանված մի հայորդի[25] (գծ. 47). ...Ի ՁԵՌՆ ԱՆԱՒՐԻՆԱՑ [ԵԻ] ՈՐՔ ՅԱՆԴԻՊԻՔ ՍՄԱՅ Ա[Ս]ՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԱՑԷՔ ՀՈԳՈՅՆ...*

Խաչքար, խոշոր, շրջանակներին և խաչաթևերի տակ (գծ. 48). ՍլՈՒՐյԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՌ ՔլՐԻՍՏՈյՍ ՓՐԿՈՒԹԵլԱՆյ ՀՈԳՈՅՆ ԱՀԱՐՈՆԻՆ, ԹԱՍ/Է /ԵԻ ԿլՈյՂԱԿՑլԻյՆ /ՏՕՂ/ԻՆ ՑԻ/ՇլԵՑԷՔյ/. ԹՎ. Ռ/ԽԹ (1600)։ Վերահրատարակելով արձանագրությունը[26], կատարում ենք որոշ սրբագրումներ և ճշտում ենք թվականը (Ս. Տեր-Ավետիսյանի գրքում ՌԻԹ (1580) է), կնոջ Տօղմիշի *փոխարեն առաջարկում ենք* Տօղին յիշեցեf *բառերը և տալիս գծագիրը, քանի որ հրատարակված աշխատությունում գլխատառերով շարվածքը փոխարինում է գծագրին, իսկ փոքրատառերով տրված է վերծանությունն ու ռուսերեն թարգմանությունը, ուստի հնարավոր չէ գաղափար կազմել ո՛չ տառաձևերի, ո՛չ էլ կցումների մասին։*

Վաղուց դիտված իրողություն է, որ Ջուղայի հուշարձանների մեջ թե՛ քանակական, թե՛ որակական առումով առաջնայինը, քաղաքին փառք բերողը խոշոր գերեզմանոցն է։ Ինչպես հնարավոր չէ տեղափոխել Ջուղա քաղաքի տարածքը, այնպես էլ չի կարելի զգալ Ջուղայից տեղափոխված խաչքարի հմայքն

---

[22] С. Тер-Аветисян, *նշվ. աշխ., էջ 110։*

[23] *Նույն տեղում, էջ 139։*

[24] *Նույն տեղում, էջ 154--155։*

[25] *Անհավատների ձեռքով 1581 թ. սպանվել էր ջուղայեցի խաչապապը (Ալիշան, Սիսական, էջ 423)։*

[26] С. Тер-Аветисян, *նշվ. աշխ., էջ 157։*

իր բնական միջավայրից կտրված, ուրիշ նյութերի ու կառույցների հարեվանությամբ։ Այս գերեզմանոցում են գտնվում կարմրավուն, սպիտակավուն, դեղնավուն քարերից պատրաստված ջուղայական դպրոցի ամենախոշոր կոթողները, արվեստի իսկական սքանչելիքներ, որոնց անտիպ արձանագրություններից մի խումբ ներկայացնում ենք ստորև։

Խաչքար, մեծ գերեզմանոցի ծայր արևմտյան եզրում, խորանախաչի կողերին (գծ. 49). Ս/ՈՒՐՅԲ ԽԱՉՅ/Ս ՅԻՇԵԱՅՏԱՅԿ Է ԱՌ ՔՐԻՍՏՈՅՍ /ԱԻԵՏ/ԻՔ ԱԲ/ԵՂԱՅԻՆ/ ԵՒ ՀԱՐ/Ս/ԻՆ՝/ ԻՇԽ/ԱՆ ՏԻ/ԿՆԷ. /ԹՎ. ՌԽԸ (1599)։ Այս խաչքարի մոտի մի այլ խոշոր կոթողի արձանագրությունը[27] վկայում է, որ հարսի ամուսին Ամիրբեգը մահացել է 1589 թ., իսկ որդին՝ Շադիբեկը, մնացել է օտարության մեջ, երևույթ, որը բնորոշ էր դեգերող հայ առևտրականի, արհեստավորի և առհասարակ կարիքի դրդումով բախտ որոնողների համար։

Խաչքար, երրորդ բլրի ծայր հարավում, կարմիր քարից։ Արձանագրությունը հրատարակել է Ս. Տեր-Ավետիսյանը, սակայն շարվածքում տողերը խառնվել են և հնարավոր չէ կռահել վերծանության ճշտությունը[28]. ուստի վերահրատարակում ենք այն՝ տալով գծագիրը (գծ. 50). ԹՎ.Ռ/ԻԶ (1577). /Ս/ՈՒՐՅԲ ԽԱՉՅՍ ՅԻՇԵԱՅ/ՏԱՅԿ Է/ ՆՈԻԲԱՐԻՆ/ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ՝ /ԹԱՐՎԷՁ/ԻՆ ՀՈԳՈՅՆ։

Խաչքար, առաջինից քիչ հյուսիս (գծ. 51). ԹՎ. ՌԼԷ (1588). /ՍՄՈՒՐՈՅԲ /ԽՄԱՉՅՍ ՅՄԻՇԵԱՅՏԱԿ ԼԷ/ ԹԱՐՎԻՁԻՆ /ՈՐԴԻՆ/ ԴԱՐ/ՏԱՄՆԻ ՀՈԳՈՅՆ։ Արձանագրության վերջին մասում քարը մաշված է, և վստահ չենք վերծանման ճշտությանը։ Սակայն ենթադրելի է, որ նախորդ արձանագրության մեջ հիշատակված Նուբարի և Թարվեզի որդու հիշատակագիրն է՝ մինչ այժմ աննկատ մնացած։

Խաչքար, առաջինի մոտ (գծ. 52). ԹՎ. Ռ/ԻԳ (1574). Ս. Տեր-Ավետիսյանը հրատարակել է նույն թվագիրը[29], սակայն այն այլ տեղում է։

Խաչքար, նախորդների մոտ, կրկնաստիճան քիվին սֆինքսներ (գծ. 53). ԹՎ. Ռ/ԽԸ (1599). /Ս/ՈՒՐՅԲ ԽԱՉՅՍ ՅԻՇԵԱՅՏԱԿ Է ԳՈՒ/ԼՄԷԼԻՔԻՆ/ ՀՈԳՈՒՆ։

Խաչքար (գծ. 54). ԹՎ. Ռ/ԻԲ (1573). /ԽԱՉՅՍ ՅԻՇԵԱՅՏԱՅԿ ԼԷ/ ՄԱՐԻԱՆ/Է ՀԼՈՅԳՈՅՆ։

Խաչքար, ընկած, փոքր (գծ. 55). ԽԱՉՅՍ ՅԻՇԵԱՅՏԱՅԿ ԼԷ ՄՈ/ԻՐԱՏԻՆ. /ԹՎ. ՋՁ/Գ (1534)։

Խաչքար (գծ. 56). Ս/ՈՒՐՅԲ ԽԱՉՅ/Ս ՅԻՇԵԱՏԱՅԿ ԼԷ ՏԻՐ/ԱՅՏ/ՈՒ/ԲԻՆ/ ԵՒ Ծ/ՆՕՂԱՅՑ /ԱՂ/ՈՒԲ/ԻՆ. /ԹՎ. Ռ/ԼԲ (1583)։ Ընդօրինակության մեջ թվատառի միավորը կարող է և Ը (8) լինել։

Խաչքար (գծ. 57). ԽԱՉՅՍ ՅԻՇԵԱՏԱՅԿ ԼԷ ՈՀԱՆԻ/ՍԻՆ. ԹՎ. ՋՀԵ (1526)։ Փորագրության մեջ անձնանվան Սի տառերը կրկնված են։

Խաչքար (գծ. 58). ԽԱՉՅՍ ՅԻՇԵԱՏԱՅԿ ԼԷ/ ԱՂՈՒ/ՊԻՆ./ ԹՎ. ՌՒԳ (1575)։

Խաչքար (գծ. 59). ԽԱՉՅՍ ՅԻՇԵԱՏԱՅԿ ԼԷ/ ԱԻԷՏ/ԻԿԻՆ./ Թ. Ռ ԻԶ (1577)։

Խաչքար, ստորին շրջագնդի կողքերին և նրա տակ (գծ. 60). ԹՎ/ՌԾ (1601). /ՍՄՈՒՐՈՅԲ ԽԱՉՅՍ ՅԻՇԵԱՏԱՅ/Կ Է ՍԱՐԿՕՂԱՅ/Ք ՓԱՆՈ/ՍԻՆ ՀԼՈՅ-ԳՈՅՆ։

Խաչքար, շրջանակի մեջ և կողքերին (գծ. 61). Թվ. Ռ/Խ/Ե (1596). ԱՐՍ-ՏՈՒԱՂԵ ՈՂԼՈՐՄԻՅՔ. Ս/ՈՒՐՅԲ ԽԱՉՅՍ ՅԻՇԵԱՏԱՅԿ Է ՊԱՐՈՆ ՄԱԼՈՒՄԻՆ ՀՈԳՈՒՆ։

Խաչքար, գեղաքանդակ, քիվին սֆինքսներ, կրկնահարկ խորանում չորս խաչաքանդակներ, որոնց մեջ և ստորին շրջագնդի ներսում ու եզրակողերին

27 Նույն տեղում, էջ 124, 161։
28 Նույն տեղում, էջ 153։
29 Նույն տեղում, էջ 151։

արձանագրված է (գծ 62). ԿՐԱՅՋՐՄՈՂ ՀՐԱՑՅՐՐԱՅ/ՊՐԵՅՏՍ ՅՐԻՇԵՅ-ՑՐԵՔՅ. /ԹՎ. Ռ/ԼԵ (1586). /Ս, ՈՒՐ, Բ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ԸՄՐԻԱԹԻՆ Հ, Ո, Գ, ՈՑ, Ն։ Վերին խաչերի միջի հապավված վյ, իծ, ՀՎ, ԱՐ բառերը վերծանել չենք կարող։ Նույն տարում Հայրապետը կերտել է մի այլ խաչքար Սուքիասի հիշատակին[30], Անշուշտ նույն վարպետի ձեռակերտն է 1571 թ. Մատուսի հիշատակին կանգնեցված խաչքարը ևս[31]։

Խաչքար, առաջինի մոտ, եզրակողերին (գծ. 63). Ս, ՈՒՐ, Բ ԽԱՉՍ ԲԱՐԵ-ԽԱԻՍ ԱՌ Ք, ՐԻՍՏՈ, Ս ՓՐԿՈՒԹԵ, ԱՆ, ՀՈԳՈՑՆ ՋԱՏԻՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ԸՄ-ՐԻԱԹԻՆ. ԹՎԿՆ ՌԼՋ (1587)։ Սրա ինչպես թվատառերը, այնպես էլ բառերն անջատված են երկու կետերով։

Խաչքար (գծ. 64). ԹՎ Ռ/ԽԱ (1592). Խ, Ա, Չ/Ս/ Յ, Ի, Շ, Ա, Տ/, Ա, Կ, Է, ՄԱՍՈՒՐ/ ԲԷԿԻՆ։

Խաչքար, խորանախաչի երկու կողմում, վերից վար (գծ. 65). ԹՎ. ՌԽ/Դ /1595/. /Ս, ՈՒՐ, Բ ԽԱՉՍ /ԲԱՐԵԽՕՍ/ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ /ԲԷԿԻ/ՋԱՆ/ԻՆ ՀՈ-Գ, Ո, ՑՆ։

Խաչքար (գծ. 66). ԹՎ. Ռ/ԽԷ (1598). /Խ, Ա, ՉՍ Յ, Ի, Շ, Ա, Տ, Ա, /Կ Է/ ԽԱՆԷ /ՀՐՈՅԳՐՈՑՅՆ։

Խաչքար, կարմրավուն քարից, 2,3 մ բարձրությամբ, առաջին՝ արևելյան բլրի արևելյան եզրում։ Ստորին շրջագծից ձախ Գևորգ զորավարի բարձրաքանդակն է և արձանագրությունը (գծ. 67). Խ, Ա, Չս Յ, Ի, Շ, Ա, Տ, Ա, Կ, Է, ԽՕՋԱՑ Ս/ԱԻԼԹԱՆԳՈՒԼ/ԻՆ. ԹՎ. ՋՂԴ (1546)։

Խաչքար, առաջինի մոտ, քիվին Քրիստոսի և չորս ավետարանիչների, ստորին շրջագծի ձախ կողմում՝ թուղթի բարձրաքանդակներն են և ննջեցյալի համառոտ հիշատակագիրը (գծ. 68). ԹՎ. ՌԻ (1571). /Ս, ՈՒՐ, Բ ԽԱՉՍ Յ, Ի, ՇՐԱՍՏԱԿՅ /Է ԱՍՏՂԻԿԻՆ։

Խաչքար, նույն մասում երկրաչափական նրբագույն զարդաքանդակներով, խորանախաչի տակ հեծյալ Ս. Գևորգի բարձրաքանդակն է՝ խաչը ձեռքին։ Քանդակի մոտ, շրջագծի եզրերին և ներսում արձանագրված է (գծ. 69). ԹՎ. Ռ/ԽԵ (1596). /Ս, ՈՒՐ, Բ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱ, Ի, Ս ԱՌ Ք, ՐԻՍՏՈ, Ս ՓՐԿԵ, Ա, ՀՈ-Գ, ՈՑ, Ն ՄԿՐՏԻՉԻՆ. ՀՈԳ, ՈՑ, Ն ԾՆՐԱՐԱՐԻՆ Ի։ Խ, Ա, Չ, Ս ՅԻՇԱ, Տ, Ա, Կ, Է, /ՄԿ, Ր, ՏՃ/Ի ԾՆԱ/ՆԱՐ/ԻՆ։ Ծնարար բառն ընկալում ենք երկնող, ծնող, մայր իմաստով։

Խաչքար, երկրորդ բլրի կենտրոնում, քիվին մարդակերպ, երկմարմին սֆինքսի, եզրերում՝ հրեշտակների բարձրաքանդակներով։ Զարդաքանդակ խաչի տակ Ջուղայի ամենանշանավոր և բեղմնավոր քանդակագործի՝ Գրիգորի ստորագրությունն է, ստորին մասի՝ ս. Գևորգի քանդակի մոտ, ննջեցյալի արձանագրության մի մասը (գծ. 70). ԳՐԻԳ[Ո]/Ր./ ԹՎ. ՌԻԱ (1572). /Ա, ՅՍ Է ՆՇԱՆ ՏԷՐՈՒՆ/ԱԿԱՆ ԵՎ ,ԲԱՐ, ԵԽԱԻ/Ս/... Վերջին երկու տողերն իսպառ մաշված-ոչնչացված են, ուր պետք է լիներ Է փրկութեան բառերը, իսկ թվատառերից վեր խաչս /վգի տառաշարքի իմաստը չի հասկացվում։

Խաչքար, ձորամիջում (գծ. 71). ԿԱՋՄ[Ո]Ղ ԳՐԻԳ[Ո]Ր./ ԹՎ. Ռ/ԺԲ (1563)։ Խաչքարը կանգնեցված է Առաքել խոջայի հիշատակին, որի արձանագրությունը չենք ընդօրինակել։

Ջուղայի վարպետները շափազանց բծախնդիր ու մանրակրկիտ են ձեռագործի հարցում։ Նրանց ստեղծագործությունները գեղարվեստական հմուտ, քարացած երաժշտականությամբ համակված կերտվածքներ են։ Շռայլ գույները, հորինվածքի բարդությունը, ներքին խոր և կենսահաստատ իմաստը, կատարողական ապշեցուցիչ տեխնիկան, ոսկերչական նրբերանգները, լույսի և ստվերի հիասքանչ խաղ ստեղծող երկշերտ քանդակները, հիրավի, հեքիաթային տեսք են տալիս դրանց։ Ջուղայի վարպետներն ազատ ու անկաշկանդ են նաև արձանագրությունների տեղի ու տառաձևերի ընտրության հարցում։ Հայ վիմագրերում տիրապետող բոլորագիր երկաթագրից բացի, Ջուղայում

---

30 Նույն տեղում, էջ 162։

31 Նույն տեղում, էջ 156։

հաճախ են հանդիպում ուղղանկյուն երկաթագիր, շղագիր ու նոտրգիր տառա-տեսակներ։ Տարաձև տառատեսակներով գրել են անգամ նույն խաչքարի վրա, որը հետևանք է վարպետների անկաշկանդ երևակայության և կանոնական խստակյաց ձևերից խոտորումների թույլատրելիության։ Մինչև իսկ կան անձնանունները փոքրատառերով սկսելու, նույն տեքստերում գլխատառի և փոքրատառի հավասարազոր կիրառության դեպքեր։ Վերոհիշյալ նկատառումները լիովին վերաբերում են նշված երկու արձանագրություններում հանդես եկող Գրիգոր կազմողի հաջորդ ստեղծագործությանը, որը Ջուղայից տեղափոխվել է էջմիածին և այժմ դրված է հին վեհարանի բակի հյուսիսային ծայրում։ Սա մոտ 3 մ բարձրությամբ գեղաքանդակ կոթող է։ Քիվի վերին շրթին 7 խաչիկներ են, որոնց արանքի ուղղանկյունների մեջ և շրջագնդի տակ՝ փորագիր ու ելնդատառ արձանագրություններ։ Վարպետն ստորագրել է նախասիրած տեղում՝ խաչակոթունի երկու կողմում, բարձրաքանդակ գրերով։ Գրիգոր վարպետի այս ձեռակերտը բաժանված է 4 մասի՝ լայն քիվ, խորանախաչ, լուսապսակ հիշեցնող թեք եզրաշրթերով խորաքանդակ շրջագունդ և ստորին՝ արձանագրված հատված։ Շրջագունդ-սերմնահատիկի քանդակները կառուցվածքային առումով զգալի զուգահեռներ ունեն Հայաստանի ավելի վաղ շրջանի խաչքարերում։ Դա բեղմնավորող, խաչածառը սնող երևույթների խորհրդանշանն է։ Խաչքարի ստորին մասում Գողգոթահող-ղիկկուրատի եռաստիճան պատկերն է՝ Գողգոթայում թաղված նախամարդ Ադամի գլխաքանդակով։ Այս տարրերը խաչքարագործության մեջ ամենատարածված և հինավուրց թեմաներից են։ Եզակի է կողային եռակամար, քուսական քանդակահենքի վրայի զիգզագ գալարներով մոտիվը։ Հիշյալ խաչքարի արձանագրությունը տրվում է լրացումներով ու շտկումներով[32], վերից վար հաջորդականությամբ (գծ. 72, նկ. 2.) ՍԻՓԻՔՍ, ԻՈՐԴՈՒՆԱ. /ԿԱԶՄԷՈՅՂ ԳՐԻԳԷՈՅՐ/։ ԱԼՑՅՍ Է ՆՇԱՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԵՒ /ԲԱՐԵԽԱՒՍ Է ՓՐԿՈՒԹԷԱՆ, ՄԱՀԴԱՍԻ ՓԱՇԱՄԻՆ ՀԷՈՅԳԷՈՅՆ. ԹՎ. ՌԻԵ (1576). ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԵՂԲԱՐՁՑՆ /ՏԷՐ ԱԹԱՆԱՍԻՆ, ԲԱԲ/ՄԱՋԱՆԻՆ ԵՒ ԾԷՆԵՈՅՂՄԱՑ։ Գեղանի կնոջ գլխով առյուծամարմին սֆինքսը դիցաբանության մեջ կյանքի կնճռոտ, խրթին ու չմեկնվող խոհական երևույթների հոմանիշն է։ Ըստ երևույթին, արվեստագետին մտահոգել է կյանքի ու մահվան առեղծվածի մայրացած, անմեկնելի թվացող երևույթը, մանավանդ որ տեղ է տրվել նաև բախտի ու ճակատագրի աստվածուհի Ֆորտունային (Իորդունա)՝ թերևս հանգելով ճակատագրի անխուսափելիության գոյությանը։ Պարզ է, սակայն, որ առանց սֆինքսի ու Ֆորտունայի աջակցության Գրիգոր կազմողը կերտել է արվեստի սքանչելիք։ Նույն Գրիգորի ձեռակերտն են 1583 թ. Խոջա Բաբեի[33], ինչպես և անթվակիր երկու այլ խաչքարեր՝ ստորագրված ԿԱԶՄՂ ԳՐԻԳՐ նախասիրած ձևով[34], որով նրա աշխատանքների թիվը հասնում է 6-ի, ընդգրկելով առնվազն 20 տարվա ժամանակահատված (1563—1583)։ Այդ ընթացքում նա, հավանաբար, հորինել է այլ գործեր ևս, որոնք սակայն, մեզ հայտնի չեն։

Խաչքար (այս և հետագա 5 խաչքարերը էջմիածին են բերվել Ջուղայից 1968—1974 թթ.) դրված է վերը նշված խաչքարերից անմիջապես հետո։ Կողերին ոճավորված գալարաքանդակներ, ստորին մասում՝ շրջագնդի ու դրա վրա, Ջուղայում սակավ հանդիպող ականթատերև խաչաքանդակներ են։ Խորանում, խաչաթևերից վեր ու վար, փորագրված է (գծ. 73, նկ. 3). ՍՄՈՒՐՂԲ ԽԱ/ՉՍ ՅՐԻՇԱ/ՐՏԱԿ Է/ ՍՏԵՓԱ/ՆՈՍԻՆ. /ԹՎ. ԻԲՇԱ (1602)։

Խաչքար, առաջինի աջ կողմում, քիվապոնկին, շրջագնդի անկյուններում և ս. Գևորգի քանդակի մոտ թիվն ու պատվիրատուի հիշատակություններն են։ Աճն ու պտղավորումը վկայող շրջագնդի վրա, սրանկյուն խորանում, Գողգոթա-ղիկկուրատից բարձրանում է ականթատերև խաչածառը։ Այս երեք մա-

32 Նույն տեղում, էջ 152։
33 Նույն տեղում, էջ 159։
34 Նույն տեղում, էջ 179։



Նկ. 2 Նկ. 3 Նկ. 4

սերն, ութաթև 34 աստղաքանդակներով, բաժանված են հնգախաչ քանդակով քիվից։ Խաչքարն իր կոթողայնությամբ, կառուցվածքային առանձնահատկությամբ և ուլունքաշար աստղազարդերով մեծապես հիշեցնում է Ջուղայում XVI դ. սկզբում գործած Գրիգոր վարպետի արվեստը, որի մասին խոսք կլինի ստորև։ Արձանագրությունը հետևյալն է (գծ. 74, նկ. 4). ՈՎ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԴՈՒ ԱՍՏՈՒԾՈՅ, ՋԽԷՐԽՈՅՐՆ ԼՈՒՍՈՎԴ ՊԱՅԾԱՌԱՑՈՅ ԹՎ. ՌԾԱ (1602)։ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ Է ՄԱՆՈՒԿ ԽԷՐԽՈՒՐԻՆ։

Նույն տեքստը կրկնվում է նաև հաջորդ արձանագրության մեջ, որի խաչքարը դարձյալ 1602 թ. հորինել է Գրիգոր վարպետը։

Խաչքար, առաջինից անմիջապես հարավ. քիվին՝ միագլուխ-երկմարմին, օձապոչ սֆինքսներ, եզրերում՝ պահապան հրեշտակների բարձրաքանդակներ։ Ուղղանկյուն խորանի ստորին մասի հեծյալի քանդակը և պատվիրատուի հուշագիրը մաշված-թափված են, մի քանի տառահետքերից նշմարվում է միայն յԿ, որը քիվատակի նեղլիկ գոտու բարձրաքանդակ գրում հիշատակված ՅԱԿՈԲ անվան կրկնությունն է։ Սրանցից վեր բուսապտղային ու բեղմնավորող մոտիվներով խոշոր սերմնահատիկ-շրջանակն է, որի վրա «քամանչագլուխ» խորաններում մի մեծ և 4 փոքրիկ խաչաքանդակներ են, որոնք երեք կողմերից շրջափակված են ութաթև 46 աստղաքանդակներով։ Բարձրաքանդակ տառերով

թիվը գրված է շրջագունդը ներառնող քառակուսու անկյուններում. թեև տասնավորի մասում քարը լրիվ մաշված է, բայց այն կրկնված է վերին արձանագրության մեջ (գծ. 75, նկ. 5). ՍԼՈՒՐՅԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՌ ՔԼՐԻՍՏՈՅՍ ՅԱԿՈԲԻՆ ՀՈԳՈՒՆ. ԹՎ. ՌՄ (1601)։ /ԹՎ. Ռ.ԼՄ/ (1601)։

Խաչքար, առաջինից քիչ հարավ. քիվում բեղ ու մորուքով, մինչև ոտքի ծայրերը հասնող ծալքավորված դգեստով Քրիստոսը բազմած է գահին՝ սուրը դիրքը կրծքին սեղմած։ Աջ կողմում Մաթևոս և Մարկոս, ձախում՝ Հովհաննես և Ղուկաս ավետարանիչների խորհրդանշան մարդու (Մաթևոս), առյուծի (Մարկոս), եզան (Ղուկաս) և արծվի (Հովհաննես) բարձրաքանդակներն են։ Նրանցից աջ ու ձախ՝ մրգով լի թասերը դեպի տերը պարզած երկուական մատուցողներ։ Խորանախաչի և կողային քանդակները կրկնող թեմաներ են։ Ստորին ձիաքանդակն ու արձանագիրը ոչնչացված են։ Խորանից վեր, ներսում գրված է (գծ. 76, նկ. 6). ՍԼՈՒՐՅԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ ԱՌ ՔԼՐԻՍՏՈՅՍ ՄԱՆԼՈՒԿ ՁԱՔԱՐԻՆ, /ԾՆ/ՕՂ/ԱՑ/Ն /ԱՄԻՐ/ԻՆ։ /ԹՎ. Ռ/ԾԱ (1602)։ ԱՌ բառի Ա-ն միաժամանակ նախորդ բառի վերջնաձևը Ս-ն է։ Թեև ակնարկը հոգնակի է, սակայն նշված է ծնողներից մեկի անունը։

Խաչքար, կանգնեցված էջմիածնի հին վեհարանի բակի ծայր հարավում։ Քիվակենտրոնում բազմած է Քրիստոսը, իսկ կողքերի քառաբսիդ հորինվածքներում բուսական դարդամոտիվներ են։ Սրածայր խորանի եզերքին արձանագրված է (գծ. 77). ՍԼՈՒՐՅԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ ԱՌ ՔՐԻՍՏՈՅՍ ՄԱՆՈՒԿ ՄԱՐԳԱՐԷ ՍՕԼԹԱՆԻՆ, ԱՒԵՏԻԿԻՆ, ԲՈՌ/ԹԷԼԻՆ. /ԹՎ. ՌԾԲ (1603)։

Խաչքար, տեղադրված է էջմիածնի Մայր տաճարը շրջափակող պարսպի հյուսիսային թևի նիշներից մեկում։ Սա իր մանրահատիկությամբ, աշխարհիկ ու ավետարանական, բիբլիական, ավանդական թեմաների ներդաշնակ համակցությամբ եզակի օրինակ է։ Ստորին մասում կրկին ս. Գևորգի քանդակն է՝ պատյանից չհանված սրի և աստղիկի պես վեր պարզած խաչի ուղեկցությամբ։ Կողքին և քիվատակի գոտուն ննջեցյալի հիշատակագիրն է՝ կրկնված երկու անգամ, և երկու դեպքում էլ այն աստիճան խաթարված, որ ընթերցվում է մեծ դժվարությամբ։ Խաչատակի քառակուսու եզերքում ելնդատառ թվատառերն են, ներսում՝ ոսկերչական նրբությամբ հյուսված բուսապտղային սերմնագունդը։ Սրածայր խորանի խաչաքանդակի տակ Ադամի դիմաքանդակն է։ Նրա կողքերին՝ Գրիգոր վարպետի (առաջին Գրիգորն իրեն միշտ կոչել է կազմող, ուստի սրանց չպետք է շփոթել) հստակ ստորագրությունը։ Այստեղ ևս խաչքարի կողերը շրջափակված են 35 աստղաղարդերով։ Քիվին՝ գահին բազմած, աջը վեր պարզած Քրիստոսն է՝ շրջապատված ավետարանիչներով, առատության եղջյուրի յուրովի վերապրուկ մրգով լի կողովիկներով և հրեշտակաթև երկուական բարձրաքանդակներով։ Ինչ խոսք, քիվաքանդակը մի ամբողջական ու մեծարվեստ գեղարվեստական ստեղծագործություն է։ Խաչքարի արձանագրությունն է (գծ. 78, նկ. 7). ՍԼՈՒՐՅԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՌ ՔԼՐԻՍՏՈՅՍ ՊԱՐՈՆ ՅՈՎԱՆԻՍԻՆ /ԳՐԼԻԳՈՐ /ՎԱՐՊԵՏ./ ԹՎ. Ռ/ԾԱ (1602). /ՍԼՈՒՐՅԲ ԽԱՉՍ ԲԱ/ՐԷԽՕՍ ԱՌ ՔԼՐԻՍՏՈՅՍ ՊԱ/ՐՈՆ ՅՈՎ/ԱՆՆԷՍ/ԻՆ։ Դժվարանում ենք բացատրել արձանագրությունների նմանօրինակ կրկնությունները։ Նույն այս Գրիգորի խաչքարերից է 1591 թ. խոջա Վալեի համար կանգնեցվածը[35]։

Խաչքար, Ջուղայի մեծ գերեզմանոցի ձորամիջյան հմտակերտ գործերից մեկը, քիվին Քրիստոսի և ավետարանիչների քանդակներ, խաչանշանի կոթունի երկու կողմում (գծ. 79). ԻՍՐԱԷԼ ՎԼԱՐԴԼԱՅՊԵՏ, շրջագնդի մոտ՝ ԹՎ. Ռ..., մնացյալը լիովին ոչնչացված է քարի բնական քայքայման հետևանքով։ Իսրայել վարպետը Գրիգոր կազմողի ժամանակակիցն է. նրա խաչքարերից մեկը թվագրված է 1575-ով[36], ուստի վերջինս ժամանակի առումով պետք է մոտ լինի դրան։

35 Նույն տեղում, էջ 164։

36 Նույն տեղում, էջ 152։



Նկ. 5 Նկ. 6 Նկ. 7

Խաչքար, նույն գերեզմանոցում, նկատել ենք միայն թվատառերը (գծ. 80). ՌԼԳ (1584)։

Հնարավոր չէ լիարժեք խոսք ասել խաչքարագործության վերջին շրջանի վերելքի մասին (երբ «սկսվում է զարդաքանդակի ծաղկման նոր էտապ, որի բնորոշ հատկանիշներն են գծերի էլ ավելի մանրացումն ու նրբացումը, քանդակների նյութ հանդիսացող առարկաների պայմանական ու ոճավորված լինելը»[37]), եթե անտեսենք ջուղայական դպրոցը։ Իսկ ինչն է բնորոշ Ջուղայի դպրոցին, որո՞նք են նրա սյուժետային և կոմպոզիցիոն առանձնահատկություններն ու ընդհանրությունները.

1. Ջուղայի խաչքարերը, բոլորն անխտիր, գերեզմանական-հուշադրական կոթողներ են։

2. Խաչքարերը չունեն պատվանդաններ և թաղված են հողի մեջ, որով ավելի է շեշտվում խաչ-կենաց ծառի և հողի միասնության գաղափարը։

3. Ջուղայի խաչքարերի միջին բարձրությունը 2 մ 20 սմ է, իսկ լայնությունը՝ մոտ 70 սմ, որով դրանք մոտենում են Հայաստանի ուրարտական շըր-

37 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 137։



ջանի կոթողներին և վերջիններիս նման վարից վեր ունեն հավասար լայնություն (կան բացառություններ)։

4. Խաչքարերի խորանները, ուր ստեղծագործության առանցքակետ խաչաքանդակն է, սլաքաձև են՝ ներառնված ուղղանկյուն քառանկյան մեջ։

5. Մշակված է խաչքարերի միմիայն մեկ՝ արևմտյան ճակատը, որի վրա դրոշմված են թե՛ քանդակները, թե՛ հիշատակագրությունները։

6. Առավել բարձրարժեք ստեղծագործությունների մշակված ճակատը բաժանված է 4 հատվածի, մի երևույթ, որը Հայաստանում նկատվում է V—



VI դդ. քառակող կոթողների վրա, իսկ XI դ.՝ խաչակողերին. ա) Հորինվածքի ստորին հատվածում քրիստոնեության կողմից սրբացված ազատարար ասպետ-զորավար, ասպազեն ս. Գևորգի քանդակն է՝ խաչի զորությանն ապավինածի հանդարտ տեսքով։ բ) Երկրորդ հատվածում ծնող և զարգացումն ապահովող հատկանիշներով շքեղաշուք սերմնահատիկ-շրջանդակն է։ գ) Երրորդ և չորրորդ հատվածներում ասեղնագործ խաչանդակն է, որը բարձրանում է Գողգոթա-գիկկուրատի վրա՝ երկրագնդի և Ադամի համակցությամբ։ Պատկերագրական՝ այս ձևը երկրագնդի վրա քրիստոնեությունը գերիշխելու հավակ-

36.

Ֆ	Ռ
Ծ	Ա

Խշայշտակէ
նանայջանին

37. Աշ ողայի
ալանդարի
Ռվ Ջ
Ճ Բ

38 Խշս յշտ
կէմէ Ռիկ
ի ն
Ռռ Ծ

39 Խշայշտակ ի շտ
ի բ է ի ա դ ի ն
Բ է ռ Թ Ջ Ճ

40 Ռ Ռ
Ճ Գ

41. Խշս շտակէ
մ ա դ ի
ն Ջ Ֆ ս
ի ն

42. Խշայշակ: Խոտ
ամ ի մ է ։ Ֆ
Ռ Բ

43 Ռ Ռ Խ Ը
Խշայշտակէ
ա ջ ի ջ բ է ֆ
ի ն

44 Խշայշակ: սա

Ն Լ	Ռ
ան	ին
Ֆ	Ռ Դ

45. Խշայշակ: փ
ի ր ի ջ ա ն ի ն
Ֆ Ջ Ղ Թ

46. Ֆ Ռ. Խ
է

47 Ս՛՛՛Ն՛Ա՛Բ՛Ն՛Ա՛Ջ՛Ե՛Ռ՛Ջ՛Ա՛Ն՛Ի՛Պ՛Ի՛Ջ՛Ս՛Մ՛Ջ՛Ա՛Ճ՛Ո՛Ղ՛Մ՛Ռ՛Ա՛Ա՛Ջ՛Է՛Ջ՛Հ՛Ո՛Գ՛Ո՛Ջ՛՛՛

48

Ա՛Ն՛Ա՛Հ՛Ա՛Ն՛Ա՛Ն՛Ա՛Ն



ը։ Խաչքարերի առանցքակետ երրորդ հատվածի բոլոր տարրերը, նշվածից բացի, ականթաձյուղերը, Քրիստոսի հետ Գողգոթայում թաղված երկու ավազակները պատկերող փոքր խաչաքանդակները, վերին անկյան շրջագծերը (արևի և լուսնի խորհրդանշանները) հայկական խաչքարերին բնորոշ ու տարածված տարրերն են։

7. Եզակի են քիվերի նախընտրված մոտիվները (Քրիստոս, ավետարանիչներ, հրեշտակներ, սֆինքսներ)։ Ավետարանական, միֆական-ավանդա-

65.

66.

67.

68.

69.

70.

71.

72.

73.

կան, մանրանկարային այս թեմաների վերարտադրությունը ջուղայական դրպրոցին հատուկ գյուտերից է, թեև Հիսուն ավետարանիչների խորհրդանշաններով նկատվում է նաև բուն Հայաստանի XVI—XVII դդ. այլ վայրերի խաչքարերի վրա (Քանաքեռ, Կամո)։

8. Ջուղայի արվեստում տարածված է «կրկնաքանդակի» սկզբունքը. որոշակի հենքի վրա «սոսնձված» աստղաքանդակների շնորհիվ ստեղծվում է լույսի և ստվերի ապշեցուցիչ խաղ։ Ոճական այս ուղղությունը Հայաստանում տարածված էր դեռևս XIII դ., որի ամենաբնորոշ օրինակներն են Պողոսի (Գոշավանք, 1291 թ.), Աբելի (Ուրծ, 1233 թ.), Մոմիկի (Նորավանք, XIV դ.)



ստեղծագործությունները, սակայն այն նոր աստիճանի բարձրացվեց Ջուղայում։

9. Ջուղայի խաչքարերի վրա նկատելի է նաև արևելյան պճնանքի դրոշմը, որը հետևանք է հարևան երկրների հետ ջուղայահայերի սերտ կապերի և այն պարզ փաստի, որ ջուղայեցի աշխարհապտույտ վաճառականներն ու արվեստագետները ներ են մուծել որոշ օտարածին տարրեր (առանձնապես՝ սրանկյուն խորանիկները) և դրանց հմտորեն միահյուսել տեղական ավանդույթներին։

ЭПИГРАФИЧЕСКИЕ НАДПИСИ ИЗ ДРЕВНЕЙ ДЖУГИ

СУРЕН САГУМЯН, ВАРДАН АРУТЮНЯН

Резюме

Богатая история экономической и культурной жизни Джуги, а также широких торгово-денежных отношений этого крупного торгового центра, разоренного шахом Аббасом в 1605 г., освещена неудовлетворительно.

Общеизвестны, в частности, хачкары Джуги, которых по свидетельству А. Родесса, в 1648 г. было 10 тысяч. В настоящее время этих памятников, украшенных духовными и светскими мотивами, сохранилось три тысячи. По разным причинам быстротечно уничтожается одна из страниц самобытного и примечательного мирового искусства, которая требует специального исследования.

Нами представлены эпиграфические надписи, скопированные с 81 хачкара Джугинского кладбища, дается их научная расшифровка, особенности хачкаров джугинской школы, композиции произведений и сюжетные особенности работ известных скульпторов-каменщиков Джуги Григора варпета, Григора Казмоха, Исраела.